ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՀԱՅԿԱԶԻ

«ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ» ԱՐՑԱԽԻ (ՂԱՐԱԲԱՂԻ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Մատենադարան Մեսրոպ Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մելքոնյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թունյան Վ. Գ.
պատմական գիտությունների թեկնածու Մաղալյան Ա. Վ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. մայիսի 7-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան, պող. 24 /4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. մարտի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Արդի պատմագիտության զարգացման հրատապ խնդիրներից մեկն, անշուշտ, աղբյուրագիտական հենքի ընդլայնումն է, որը պետք է ընթանա ինչպես հայտնի աղբյուրների տեղեկատվական աստիճանի բարձրացման, այնպես էլ նորահայտ փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ դնելու ճանապարհով: Հայտնի է, որ պատմագիտական սկզբնաղբյուրների հիմնական տեսակներից մեկը աղբյուրագիտական հավաքածուներն են, տարաբնույթ ժողովածուները, պարբերական մամուլը և այլն: Աղբյուրագիտական հավաքածուների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ներկայացված վավերագրերն այստեղ համակարգված և տեսակավորված են, ինչը հնարավորություն է տալիս բազմակողմանի վերլուծության ենթարկել պատմական տարաբնույթ փաստաթղթերը:

Ներկա ատենախոսության թեման ունի ինչպես աղբյուրագիտական, այնպես էլ քաղաքական հնչեղություն, հատկապես երբ նկատի ենք ունենում Արցախի պատմության հանդեպ վերջին ժամանակների աննախադեպ հետաքրքրությունը: Այն, անշուշտ, պայմանավորված է նաև ներկայումս ընթացող արցախյան հակամարտության բուռն գործընթացներով: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի ողջ պատմագիտական դպրոցը «լծվել է» Արցախի պատմության կեղծարարության գործին: Օգտագործելով համացանցի ընձեռած ներկայիս հնարավորությունները՝ նրանք ամեն տեսակի խեղաթյուրված ու պատմագիտության հետ առնչություն չունեցող տեղեկատվություն են տարածում՝ փորձելով թյուրքացնել Արցախի պատմական անցյալը: Ուստի ներկա հիմնահարցի ընտրությունը թելադրված է այդօրինակ հրապարակումներին հակադարձելու, ինչպես նաև դրանց ողջ սնանկությունն ու հակագիտականությունը վեր հանելու անհրաժեշտությամբ[1]:

---

[1] Դեռևս նախագահ եղած ժամանակ, 1999թ. Հ. Ալիևը «հրահանգ» էր տվել Ադրբեջանի պատմաբաններին. «...պետք է ստեղծել այնպիսի գործեր, որպեսզի մշապես և հետևողական կերպով ապացուցվի այն հողերի պատկանելությունը Ադրբեջանին, որտեղ այժմ տարածված է Հայաստանը: Մենք պետք է դա կատարենք: Մենք պետք է ճանապարհ բացենք ապագա սերունդների համար»: «Բակինսկի ռաբոչի», 11 փետրվարի 1999թ. Տես՝ էլեկտրոնային կայք՝ http://sumgait.Info /caucasus-conflicts/nagorno-karabakh-facts/nagorno-karabakh-facts-5.htm. Տե՛ս նաև Карабах: Этимология, территория и границы. http://www.azerbaijan.az/-portal/Karabakh/History/history_r.html, Джамиль Гасанлы, Карабах: Поиск исторической правды. Журнал «Кавказ и глобализация», 2010,т. 4, выпуск 3-4. http://cyberleninka.ru/article/n/karabah-poisk-istoricheskoy-pravdy. Нагорный Карабах: факты против лжи. http://sumgait.info/caucasus-conflicts/nagorno-karabakh-facts/nagorno-karabakh- facts-5.htm, Рафика Агакишибекова: Кровавые страницы истории азербайджанского народа. http://azpress.az/index.php?lang=ru&sectionid=news&id=26181., Махмуд Исмаил. История Азербайджана (Краткий обзор с древнейших времен до 1920 г.) http: //eli-brary.bsu.az/-yenii%5Cebookspdf%5Cistoriya_azerbayjana.pdf և այլն:

Ռուսական հեղինակավոր աղբյուրագիտական հավաքածուի ուսումնասիրության ձեռնարկումը պայմանավորված է երկու կարևոր հանգամանքով. նախ, որ վերջինիս նյութերը բացառապես արխիվային վավերագրեր են, երկրորդ՝ ընտրվել է այդ տեսակի մեջ այնպիսի հավաքածու, որն ամբողջովին և հիմնարար կարող է պատասխան տալ առաջադրված հիմնահարցերին: «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» հավաքածուն այդ հնարավորությունը լիովին ընձեռնում է:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ներկա ուսումնասիրության նպատակն է՝ առանձնացնել և քննության առնել «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում» (ԿՀՀՎ) Արցախի XVIII դարի վերջի և XIX դարի կեսերի պատմությանը վերաբերող և պատմագիտական կարևորություն ներկայացնող փաստաթղթերն ու նյութերը, ընդգծել դրանց աղբյուրագիտական արժեքը: Ընդսմին Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը դիտարկվել են հետևյալ խնդիրների իրագործման տեսանկյունից՝

- Ուսումնասիրել հավաքածուում Արցախի պատմությանը վերաբերող փաստաթղթերը, առանձնացնել աղբյուրագիտական պատմագիտական նշանակության վավերագրերը:
- Քննարկել Արցախի պատմությանը վերաբերող աղբյուրագիտական նյութերի նշանակությունը ադրբեջանական ներկայիս պատմագիտության կողմից այդ պատմության խեղաթյուրմանը հակադարձելու տեսանկյունից:
- Արցախի պատմությանը վերաբերող նյութերի օրինակով վերլուծել տարածաշրջանում ռուսական քաղաքականության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները: Հարկ է նաև փաստերով հիմնավորել, որ ռուսական քաղաքականությունը մարզում հիմնականում իրականացվել է տեղի հայության միջոցով:
- Բացահայտել Արցախում մահմեդական իշխանության տարիներին հայ բնակչության հանդեպ վերջիններիս կողմից որդեգրած հակահայ քաղաքականության հետևանքները:
- Ցույց տալ, որ մահմեդական խաների կառավարման տարիներին Արցախում հայկական բնակչության թվաքանակի նվազումը գերազանցապես մահմեդական իշխանությունների հայահալած քաղաքականության արդյունքն էր և որ այդ քաղաքականության հետևանքով տեղի է ունեցել Արցախի մի մասի հայության հայրենազրկումը:
- Հիմնավորել Արցախի հայկականությունը, դարերով այստեղ ապրած հայ ժողովրդի բնիկ լինելու հանգամանքը:
- Լուսաբանել Արցախի սոցիալ-տնտեսական իրավիճակի առանձնահատկությունները, ցույց տալ տեղի հայության գերակա մասնակցությունը մարզի սոցիալ - տնտեսական զարգացման գործընթացներին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ներկա հետազոտության ժամանակագրական սահմանները պայմանավոր-

ված են Կովկասի հնագրական հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հատորի համար սահմանված ժամանակահատվածով: Հավաքածուի յուրաքանչյուր հատոր ընդգրկում է իրեն համար հստակ առանձնացված ժամանակահատված. հաճախ այդ սահմանազատումը պայմանավորված է Կովկասում նոր կառավարչապետի նշանակման հանգամանքով: Ուստի առաջին հատորը սկսվում է XVIII դարի վերջին Անդրկովկասում խմորված պատմական իրադարձությունների ներկայացմամբ, իսկ վերջին՝ XII հատորն ավարտվում է XIX դարի կեսերն ընկած ժամանակահատվածի պատմությանը վերաբերող վավերագրերով[2]:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը գրվել է պատմահամեմատական, գիտական անաչառության և վերլուծության մեթոդաբանությամբ: Սկզբնաղբյուրների, արխիվային վավերագրերի և ուսումնասիրությունների նկատմամբ ցուցաբերվել է քննական մոտեցում, համեմատվել և վերլուծության են ենթարկվել տարաբնույթ, երբեմն իրարամերժ փաստեր և տեսակետներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Մատենադարան Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի միջնադարյան սկզբնաղբյուրների ուսումնասիրման բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական հարցադրումներն ու դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած 8 հոդվածներում:

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Անշուշտ, անհնարին է գտնել նախախորհրդային, առավել ևս խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի որևէ հայ պատմաբան, որն այդքան առատորեն օգտված չլինի Կովկասի հնագրական հանձնաժողովի հրատարակած վավերագրերից, հատկապես երբ հարցը վերաբերել է

---

[2] «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի» **առաջին** հատորն ընդգրկում է 1801-1802 թթ. գեներալ Կ. Ֆ. Կնորինգի Կովկասի կառավարչապետության ժամանակահատվածը (Թիֆլիս, 1866), **երկրորդ** հատորը՝ գեներալ Պ. Դ. Ցիցիանովի՝ 1802-1806 թթ. (Թիֆլիս, 1868), **երրորդ** հատորը՝ ֆելդմարշալ Ի. Վ. Գուդովիչի՝ 1806-1809 թթ. (Թիֆլիս, 1869), **չորրորդ** հատորը՝ գեներալ Ա. Պ. Տորմասովի՝ 1809-1811 թթ. (Թիֆլիս, 1870), **հինգերորդ** հատորը՝ գեներալներ Ֆ. Օ. Պաուլուչչի և Ն. Ֆ. Ռտիշչևի՝ 1811-1816 թթ. (Թիֆլիս, 1873), **վեցերորդ** հատորն ընդգրկում է գեներալ Ա. Պ. Երմոլովի՝ 1816-1827 թթ. և բաղկացած է երկու մասից (Թիֆլիս, 1874, 1875), **յոթերորդ** հատորը՝ ֆելդմարշալ Ի. Ֆ. Պասկևիչի՝ 1827-1831 թթ. (Թիֆլիս, 1878), **ութերորդ** հատորը՝ բարոն Գ. Վ. Ռոզենի՝ 1831-1837թթ. (Թիֆլիս, 1881), **իններորդ** հատորը՝ գեներալ Ե. Ա. Գոլովինի 1837-1842 թթ. և **Ա. Ի. Նեյդգարդի՝** 1842-1844 թթ. (Թիֆլիս, 1884), **տասներորդ** հատորը՝ փոխարքա Մ. Ս. Վորոնցովի՝ 1844-1854 թթ. (Թիֆլիս, 1885), **տասնմեկերորդ** հատորը՝ գեներալ Ն. Ն. Մուրավյովի՝ 1854-1856 թթ. (Թիֆլիս, 1888) և վերջին՝ **տասն-երկուերորդ** հատորը՝ իշխան Ա. Ի. Բարյատինսկու կառավարչապետության ժամանա-կաշրջանը՝ 1856-1862 թթ. (Թիֆլիս, 1904):

հայոց պատմության XVIII-XIX դարերի ուսումնասիրությանը: Այդ վավերագրերը զետեղված են հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրված ամենատարբեր բնույթի ժողովածուներում:[3] Տասներկու հատորանոց այս հավաքածուն (վեցերորդ հատորն իր հերթին բաղկացած է երկու մասից, իսկ էջերի ընդհանուր ծավալն անցնում է 13500-ը), հետազոտողին հնարավորություն է տալիս գտնել իրեն անհրաժեշտ նյութը, որում, ինչպես արդեն նշեցինք, բացառապես արխիվային բնույթի վավերագրեր ու փաստաթղթեր են: ԿՀՀ առանձին վավերագրեր զետեղված են Արցախի XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի պատմությանը նվիրված աշխատություններում[4]: Եվ այդուհանդերձ, պատշաճին գնահատելով հայ պատմաբանների կատարած շնորհակալ աշխատանքը Արցախի պատմության ուսումնասիրության խնդրում, հարկ է նշել, որ «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի» ամբողջական ուսումնասիրությունն ու գնահատությունը մեզանում առանձին քննության չի ենթարկվել: Այդ վավերագրերը գլխավորապես ուսումնասիրվել են հատվածային կտրվածքով, որքանով, որ վերաբերել են իրենց հիմնահարցին: Բացակայում է նաև պատմագիտական այս ստվարածավալ հավաքածուի աղբյուրագիտական վերլուծությունը առանձին վերցրած հիմնահարցերի ուսումնասիրության տեսանկյունից:

Ներկա հետազոտությունն իր տեսակի մեջ առաջին փորձն է՝ ԿՀՀ վավերագրերի հիման վրա ամբողջացնել մեկ առանձին վերցրած հիմնահարցի ուսումնասիրումը: Խնդիրը պատմագիտական կարևորություն է ձեռք բերում նաև այն տեսակետից, որ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը կոնտեքստից կտրված ձևով հաճախ են վկայակոչվում ադրբեջանցի պատմաբանների կողմից և տարածված են համացանցում: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ցույց տալ «ապացուցողական ադրբեջանական հենքի» ողջ սնանկությունը, ինչը վերջիններիս ակնհայտորեն կզրկի հակառակը պնդելու հնարավորությունից: Անտարակույս, ԿՀՀՎ-ում զետեղված փաստաթղթերը, որոնք վերաբերում են Արցախի նշված ժամանակաշրջանի պատմության լուսաբանությանը, աղբյուրագիտական հստակ հիմնավորումներ են պարունակում ադրբեջանական ներկայիս աղավաղումներին և խեղաթյուրումներին հակադարձելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել ուշ միջնադարի և նոր շրջանի, մասնավորապես Արևելյան Հայաստանի և Արցախի XVIII - XIX դարերի, ինչպես նաև հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերով հետաքրքրվողների համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև քրեստոմատիաների, աղբյուրագիտական ժողովածուների, բուհական ու դպրոցական դասագրքերի կազմման ժամանակ, ինչպես նաև հայոց պատմության XVIII - XIX դարերի դասավանդման ընթացքում:

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՆՔԸ: Ներկա հետազոտության հիմնական ու գլխավոր աղբյուրը Կովկասի հնագրական հանձնաժողովի կողմից հրատարակած և տասներկու (ընդհանուր ծավալով՝ տասներեք) հատորներում ամփոփված և Արցախի XVIII դարի վերջի - XIX դարի կեսերն ընկած պատմությունը լուսաբանող արխիվային վավերագրերն են: Հավաքածուն սկզբում կոչվել է գլխավոր կառավարչի գրասենյակի արխիվ, 1845 թ. վերանվանվել է Կովկասի փոխարքայի գրասենյակի, իսկ 1859 թվականից գործել է որպես Փոխարքայի գլխավոր վարչության արխիվ: Ինչ վերաբերում է բուն հանձնաժողովի ստեղծմանը, ապա 1843 թ. գեներալ Ա. Ի. Նեյդգարդի կարգադրությամբ ստեղծվում է հատուկ հանձնաժողով, նշանավոր կովկասագետ Ա.Դ. Բերժեի նախագահությամբ[5]: Ավելի ուշ այն ստանում է ***Կովկասի հնագրական հանձնաժողով*** անվանումը: Վերջինիս վերապահված էր առանձնացնել պահպանության համար պիտանի վավերագրերը, իսկ այն փաստաթղթերը, որոնք պահպանման ենթակա չէին, պետք է ոչնչացվեին: Հայազգի մասնագետներից այդ հանձնաժողովում ընդգրկվել է նշանավոր պատմաբան Ալեքսանդր Երիցյանը:

Հանձնաժողովը կատարելով իրեն հանձնարարված աշխատանքը, արդեն 1844 թ. օգոստոսին զեկուցում է, որ հավաքված արխիվը կազմում է 43.514 գործ և 877 գիրք: Պահպանության համար նախատեսվում էր 10.538 գործ և 628 գիրք[6]: Ի դեպ, ոչնչացման ենթակա գործերը (իսկ դրանք քիչ չէին՝ 32. 976 գործ և 249 գիրք՝ Է.Հ.), գեներալ Ա. Նեյդգարդի հրամանով մեկ տարի դեռևս պետք է պահպանվեին և հետագայում, երբ կպարզվեր դրանց ոչ

---

[3] Տե՛ս Армяно-русские отношения в XVIII в. (1760-1800), Сборник док.ов, т. IV, Ереван, 1990, Присоединение Восточной Армении к России. Сборник док.ов, т. I - II, Ереван, 1972, 1978 և այլն:

[4] Տե՛ս Լեո, «Հայոց պատմություն», հ. 4, «Ժամանակակից պատմություն» (XIX դարի առաջին կես), գիրք 1, Երևան, 1984, Нагорный Карабах; историческая справка (ред. Галоян Г., Худавердян К.), Ереван, 1988, Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994, Тунян В., Карабахский конфликт: Историко-геополитический аспект, Ереван, 1999, Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, նույնի Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813թ., Ստեփանակերտ, 2013, նույնի Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում», Երևան, 2017, Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII - XIX դդ., Երևան, 2007, Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике, т. 1 - 2, М., 2008, 2009, Բաղդասարյան Ն., Վարչա-քաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867թթ., Երևան, 2015, Тер-Саркисянц А., Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции. М., 2015, Дадаян Ст., Политическая история Арцах-Карабаха от Хамсы до автономии. Факты и вымыслы. Степанакерт, 2017 և ուրիշ:

[5] Ա. Բերժեի մահվանից հետո (1886 թ.) հավաքածուի վերջին երկու հատորները խմբագրել է Դ. Ա Կոբյակովը:

[6] Акты кавказской археографической коммиссии. Այսուհետև՝ АКАК, т. I, Тифлис, 1866, с. V-VI.

պիտանելիությունը, ենթակա էին վերջնական ոչնչացման: Բարեբախտաբար, այդ վավերագրերը չոչնչացվեցին և կարծում ենք, դրանք ևս առանձին ուսումնասիրության թեմա կարող են դառնալ հետազոտողների համար: Ի դեպ, այդ անտիպ փաստաթղթերի մի մասն այժմ պահվում են Ռուսաստանի պետական կենտրոնական ռազմապատմական արխիվում[7]:

Ուսումնասիրության ընթացքում հիմնականում առանձնացվել են «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» հավաքածու - արխիվի հետևյալ բովանդակության փաստաթղթերն ու վավերագրերը.

- Ռուսական արքունիքի՝ Կայսերական հրամանագրերն ու հրովարտակները, որոնցում ամփոփված են կովկասյան տարածաշրջանում, այդ թվում և Արցախում ռուսական կառավարության ձեռնարկած գործողությունները:
- Կովկասի կառավարչապետների զեկուցագրերը և հաշվետվությունները, հրահանգներն ու հրամանները, որոնք Արցախի պատմության վերաբերյալ կարևոր աղբյուրագիտական նյութեր են պարունակում տարածաշրջանում Ռուսաստանի վարած քաղաքականության և տեղի ժողովուրդների հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին:
- Կովկասում[8] ծառայության անցած և պատերազմական գործողություններին անմիջական մասնակցություն ունեցած ռուս գեներալների և սպաների զեկուցագրերը, որոնք կարևոր մանրամասներ են հաղորդում իրականացված ռազմական գործողությունների և արցախահայության ակտիվ մասնակցության մասին:
- Հնագրական հանձնաժողովի վավերագրերում Արցախի պատմության լուսաբանության կարևոր աղբյուր են Կովկասի կառավարչապետների, ռուս բարձրաստիճան պաշտոնյաների, Ղարաբաղի և հարևան խաներին ուղղված նամակները, որոնք պատմագիտական առումով կարևոր բացահայտումներ են պարունակում:
- Աղբյուրագիտական կարևոր արժեք ունեն նաև տարածաշրջան այցելած ռուս բարձրաստիճան պաշտոնյաների, պետական խորհրդականների նոթագրությունները. դրանցում առկա պատմագիտական նյութերն առավել իրատեսական են և հավաստի: Հատկապես կարևոր են Արցախում տիրող ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի, հայ բնակչության հանդեպ մահմեդական իշխանությունների կողմից գործադրված բռնությունների ու կատարված տարաբնույթ չարաշահումների մասին վկայող փաստաթղթերը:
- Եվ վերջապես, ԿՀՀ վավերագրերի աղբյուրագիտական կարևոր արդյունքներից մեկը վիճակագրական բնույթի տեղեկություններն են, որոնցից կարելի է հստակ պատկերացում կազմել մարզի սոցիալ-տնտեսական

[7] Տե՛ս Российский государственный военно-исторический архив (РГВИА).

[8] Ծնթ. տվյալ դեպքում «Կովկաս» տեղանվան տակ հասկացվում է Այսրկովկասը, որը ռուսական պաշտոնական աղբյուրներում գործածվել է Կովկաս՝ «Кавказ», կամ՝ Անդրկովկաս - «Закавказье» ձևով:

իրավիճակի, ինչպես նաև այդ գործընթացներում Արցախի հայության ունեցած դերակատարության մասին:

Պատմագիտական բնույթի առանձին հարցերի քննության ընթացքում, որոնք լրացուցիչ պարզաբանում են պահանջել, բնականաբար, անդրադարձ է կատարվել տվյալ հարցի մասին հայ և ռուս պատմագիտության մեջ շրջանառված կարծիքներին, հղումներ ենք կատարել ատենախոսությունում ներկայացված վավերագրերի հավաստիությունը հաստատող աշխատություններից, աղբյուրագիտական այլ ժողովածուներից ու հոդվածներից: Իհարկե, նման միջամտություններն աշխատանքում շատ չեն, քանի որ հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրը՝ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում Արցախի պատմության լուսաբանությանը միտված փաստաթղթերի առանձնացումն է և դրանց աղբյուրագիտական նշանակության ընդգծումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած աղբյուրների և գրականության ցանկից, 180 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանն ու գիտական նորույթը, աղբյուրագիտական հենքը, նշված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, տրված է ժամանակագրական շրջանակները, կիրառական նշանակությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը Արցախի (Ղարաբաղի) XVIII դարի վերջի – XIX դարի սկզբի քաղաքական իրավիճակի և երկրամասը Ռուսաստանին միացման մասին», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլուխը՝ « **Արցախում (Ղարաբաղում) տիրող իրավիճակի բնութագրությունը XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին»,** նվիրված է Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում Արցախի մասին զետեղված արխիվային վավերագրերի և հաղորդած տեղեկությունների քննությանը: Հարկ է նշել, որ Արցախի մասին տեղեկությունները զետեղված են ժողովածուի արդեն անդրանիկ հատորում. Վրաստանի գծով նախարար, պետական խորհրդական Պ. Կովալենսկոյի «Վրաստանի մասին» նոթերում առանձին բաժնով ներկայացված է Արցախում XVIII դարի վերջին տիրող իրավիճակը: Այնտեղ կարդում ենք. «Իբրահիմ խանը... Փանահ հորից հետո Ղարաբաղը ստացել է որպես սահմանափակ մասնակցությամբ ժառանգություն, **որը դեռևս կառավարում էին հայկական մելիքները և հնագույն ժամանակներից պահպանել էին իրենց անկախությունը** (ընդգծումը մերն է - Է.Հ.)»:[9] Այսինքն՝ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի առաջին հատորում իսկ փաստվում է Արցախի հայկականությունը և անկախ

[9] АКАК, т. I, Тифлис, 1866, док. 34. Записки с.с. Коваленского о Грузии, с. 120.

լինելու հանգամանքը, որը պատմագիտական առումով կարևոր արձանագրում է և այս բազմահատոր նյութերում Արցախի պատմության, թերևս, ամենից կարևոր արժևորումներից մեկն է:

«Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի» առաջին հատորում փաստաթղթային տեսքով ամբողջական ձևով ներկայացված է ռուսական արքունիքի հետ Արցախի հայ մելիքների հետ ունեցած առնչությունների ողջ պատկերը. դրանք լիարժեք պատասխան են տալիս այն հարցին, թե ինչու և ինչ պատճառներով Արցախի հայ մելիքները թողեցին իրենց հայրենիքը և հայտնվեցին հարևան Վրաստանում: ԿՀՀ վավերագրերում բացահայտվում են XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի Արցախի պատմությանը վերաբերող առանցքային շատ հարցեր: Իսկ ամենից կարևոր պատմագիտական ընդգծումն այն է, որ գրեթե բոլոր վավերագրերում փաստվում է Արցախի հայկականությունը, դարերով այստեղ ապրած և իր պատմությունը կերտած ժողովրդի իրողությունը:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում առանձին փաստաթղթերով,[10] մանրամասն ներկայացված են Արցախի հինգ մելիքությունները: Անկասկած է, որ ռուսական աղբյուրի կողմից բերված այս վավերագրերը պատմագիտական արժեք ունեն և կրկին անգամ հաստատում են Արցախի մելիքների լիակատար իրավունքներն այդ տարածքների նկատմամբ: Այսպես, 875-րդ փաստաթղթի վերնագիրն ամեն ինչ ասում է՝ Նորին Մեծություն ռուսաց թագավորի շնորհագիրը (խոսքը Պավել Առաջինի 1799թ. հունիսի 2-ի շնորհագրի մասին է – Է. Հ.) Ղարաբաղի Հայ մելիքներին. «Տերունական և նշանավոր Ղարաբաղի մարզի բարեպաշտ մելիքներ (օգտագործվել է державной բառը - Է.Հ.) Վարանդայի տիրակալ Ջումշուդ Շահնազարովին, Գյուլիստանի տիրակալ մելիք Ֆրիդոն Բեգլարովին և նշանավոր մարզի մյուս բոլոր տիրակալ մելիքներին, հարյուրապետներին և ողջ ժողովրդին մեր կայսերական բարեհաճությունը և շնորհապարտությունը: Հաճելիորեն տեղեկանալով մեր նախարարության զեկուցագրերից՝ Ռուսաց տիրակալի և Ռուսական արքունիքի հանդեպ Ձեր նվիրվածության և խնդրանքի մասին, որ թողնելով ***Ձեր նախկին հայրենիքը,*** **ուր դուք հալածվում եք** (ընդգծումը մերն է - Է. Հ.), թույլատրում եմ Ձեզ՝ Ձեր հպատակների հետ միասին հաստատվել մեր Կայսրության սահմաններում..., օգտագործել այն Ձեր պաշտպանության և օգուտների համար, քանի որ այդպիսին է Ձեր ջանադիր ցանկությունը»[11]:

Նպատակ ունենալով ներկա ուսումնասիրությամբ ընդգծել և փաստել Ղարաբաղի մահմեդական իշխանությունների կողմից հայ մելիքական տների ու հայ բնակչության հանդեպ սանձազերծած ահաբեկումներն ու ունեցվածքի

[10] Տե՛ս նույն տեղում, դոկ. 874. Имена и провинции пяти меликов Армянских, с. 635, դոկ. 875. Грамота Е. И. В. Армянским меликам. с. 635.

[11] Նույն տեղում, դոկ. 875. Грамота Е. И. В. Армянским меликам. с. 635 - 636.

բռնագրավումները, անկասկած է, որ այս ամենի տրամաբանական հետևանքը պետք է լիներ վերջիններիս կողմից հայրենի եզրերի ճարահատյալ և հարկադրաբար լքումը: Կովկասի հնագրական հանձնաժողովի հրատարակած վավերագրերը նման եզրակացություն կատարելու համար մեզ լիակատար իրավունք են տալիս[12]: Այդուհանդերձ, հաստատվելով հարևան Վրաստանում՝ Արցախի մելիքներն ու հայ բնակչությունը ոչ միայն տնտեսական վերելք ապահովեցին իրենց հատկացված տարածքներում, այլև նշանակալի ծառայություններ մատուցեցին ռուսական կառավարությանը՝ Անդրկովկասում ռուսական ներկայությունը և հետագա առաջխաղացումն ամրապնդելու խնդրում:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են **Արցախը Ռուսաստանին միացման պատմության դրվագները** հնագրական հանձնաժողովի վավերագրերում: Հայտնի է, որ XIX դարի սկզբին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև ծավալված դիվանագիտական պայքարն ի վերջո հանգեցրեց 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Բնականաբար, ծավալված ռազմական գործողություններն իրենց անմիջական ազդեցությունն էին ունենալու Արցախի ընդհանուր իրավիճակի վրա: Ռուսական իշխանություններին լրջորեն մտահոգում էր Իբրահիմ խանի անկայուն պահվածքը և ակնհայտ երկդիմի քաղաքականությունը: Եվ որքան ռազմական գործողությունները խորանում էին Ղարաբաղում, այնքան ավելի կոշտ էր դառնում Իբրահիմ խանի հանդեպ ռուսական հրամանատարության դիրքորոշումը: Այդ մասին է վկայում Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում տեղ գտած բազում փաստաթղթերի առկայությունը[13]:

Ղարաբաղի Իբրահիմ խանին ռուսական հպատակության մղելու գեներալ Պ. Ցիցիանովի ջանքերն, ի վերջո հաջող ավարտ ունեցան. 1805 թ. մայիսի 22-ին նա հանդիսավորությամբ զեկուցում է ռուսաց կայսրին՝ Իբրահիմ խանի «հավերժ հպատակության ընդունելու մասին»[14]: Անտարակույս, ուշագրավ է նաև զեկուցագրում գլխավոր հրամանատարի արտահայտած հետևյալ միտքը. «Այս տարածքի ժողովրդագրությունը ներկա դրությամբ բավականին տարբեր է **անցյալ ժամանակների համեմատ, քանի որ մինչև Աղա Մուհամեդ խանի արշավանքը և Ղարաբաղի իշխանության անկումը, միայն**

[12] Տե՛ս նույն տեղում, դոկ. 871. Прошение мелика Фридона, владельца Гулистанского, к Е. И. В., с. 631, դոկ. 872. Письмо Армянских меликов Джимшида Варандинского и Фридона Гулистанского к Е. И. В. с. 632, դոկ. 883. Прошение, поданное ген.-л. Кнорингу епископосом Саркисом Гандзасарским, от 29-го мая 1801 года, с. 638 և այլն:

[13] Տե՛ս նույն տեղում, т. II, Тифлис, 1868, դոկ. 1428. Предложение кн. Цицианова Ибрагим хану, от 16 января 1805 года, N 37. դոկ. 1431. Письмо кн. Цицианова Ибрагим-хану, от 14-го марта 1805 года, N 162. դոկ. 1434. Письмо кн. Цицианова Ибрагим-хану, от 25-го апреля 1805 года, N 279 և այլն:

[14] Նույն տեղում, դոկ. 1436. Всеподданнейший рапорт кн. Цицианова, от 22-го мая 1805 года, N 19, с. 703.

հայերն այստեղ կազմում էին 40 հազար տուն: ... ուստի ես մտադիր եմ Շիրվանից հետ **բերել այնտեղ հեռացած հայկական 8 հազար ընտանիքներին** (ընդգծումը մերն է - Է.Հ.)»[15]: Ակներև է, որ նույնիսկ Իբրահիմի կառավարման տարիներին հայկական բնակչությունը գերազանցել է մահմեդականին. Ղարաբաղը շարունակել է մնալ որպես հայկական երկրամաս: Ուստի Արցախը «թուրքացնելու» ադրբեջանցի պատմաբանների ջանքերը՝ թե իբր XVIII դարի վերջից սկսած մահմեդական բնակչությունը գերազանցել է հայկականին, հիմնազուրկ են:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ կրում է **«Արցախի XIX դարի առաջին քառորդի պատմության լուսաբանումը Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում (1805-1828 թթ.)»** խորագիրը և բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «1805 - 1813 թթ. իրադարձությունների լուսաբանությունը» ԿՀՀՎ-ում զետեղված փաստաթղթերի հիման վրա ներկայացվում և մանրամասն քննության են առնվում Քյուրակչայի 1805 թ. մայիսի 14-ի պայմանագրից հետո Արցախում ծավալված իրադարձությունները: Հիմնավորվում է, որ Ռուսաստանին միանալուց հետո ռուսական կառավարությունը շարունակում էր երկրամասը համարել մարտավարական առաջնակարգ նշանակություն ունեցող տարածք: Ակնհայտ էր նաև, որ Իբրահիմ խանի ռուսական հպատակություն ընդունումը բացառապես ժամանակ շահելու նպատակ ուներ: Ավելին, վերջինս շարունակում էր իր երկդիմի քաղաքականությունը ռուսական իշխանությունների հանդեպ: Հետևաբար, ռուսական հրամանատարությունը բոլոր հիմքերն ուներ Ղարաբաղի խանին քաղաքական ասպարեզից հեռացնելու համար. 1806 թ. հունիսի 14-ին Իբրահիմը սպանվում է: Ընդսմին արխիվային վավերագրերը հաստատում են, որ Ղարաբաղի խանի ծրագրած դավադրության մասին ռուսական հրամանատարությանը տեղեկացել են Արցախի մելիքները[16]:

Ղարաբաղի կառավարումը հանձնվում է Իբրահիմի որդիներից Մեհտի Ղուլի աղային, որը կայսր Ալեքսանդրի 1806 թ. սեպտեմբերի հրովարտակով հաստատվում է որպես Ղարաբաղի կառավարիչ[17]: Սակայն ինչպես գրում է Լեոն, «Մեհտի Ղուլի խանը Թիֆլիսում հավատարմության երդում տվեց Ռուսաստանին և վերադարձավ Շուշի՝ գրեթե իսկույն այդ երդումը դրժելու համար: Նա իր հոր հարազատ ժառանգն էր՝ նույնպիսի անգութ, նույնպիսի խորամանկ և ուխտազանց: Ռուսների վերաբերմամբ նրա անբարյացակամ, նույնիսկ թշնամական տրամադրությունն ակներև էր ամենքի համար»[18]: Եվ

[15] Նույն տեղում:

[16] Տե՛ս նույն տեղում, դոկ. 600. Письмо Мелик-Джимшида Мелик-Шахназарова к ген.-м. Несветаеву, в конце мая 1806 года. – Шуша, с. 329.

[17] Տե՛ս նույն տեղում, т. III, Тифлис, 1869, դոկ. 613, Высочайшая грамота ген-м. Мехти-Кули-аге, от сентября 1806 года, с. 336.

[18] Լեո, «Հայոց պատմություն», հ. 4, գիրք 1, Երևան, 1984, էջ 366:

այդուհանդերձ, ռուսական իշխանություններն առժամանակ ստիպված էին հանդուրժել Մեհտի Ղուլի խանի կամայականությունները: Անշուշտ, ռուսական հրամանատարությունը քաջ գիտակցում էր, որ քանի դեռ ընթանում է ռուս - պարսկական պատերազմը, պարսկական խաներն ամեն րոպե կարող էին չդիմանալ պարսից շահի գայթակղություններին և անցնել վերջինիս կողմը: Սակայն ակներև էր, որ ռուսական իշխանությունների հանդեպ մահմեդական խաների ծրագրած խարդավանքներից մեծապես տուժում էր նաև Արցախի հայությունը:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում առանձնանում են Արցախի հայության կողմից ռուսական բանակներին ցուցաբերած նշանակալի օգնությունը հաստատող փաստաթղթերը: Ավելին՝ հնագրական հանձնաժողովի հրապարակած վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճակատագրական այդ օրերին, երբ ակնհայտ էր տեղի մահմեդականների դավադիր վարքագիծը, ռուսական հրամանատարությունը աջակցության ակնկալիքով բացառապես դիմել է Արցախի հայությանը[19]: Դրան հակառակ՝ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում բազմիցս կարելի է հանդիպել Արցախի մահմեդականների կողմից Ռուսաստանի թշնամիներին հավատարմություն ցույց տալու փաստերի[20]: Այդուհանդերձ, հակված ենք կարծելու, որ Արցախի հայության ռուսական բանակներին ցույց տված ծանրակշիռ օգնությունն առաջին հերթին պայմանավորված էր սեփական հայրենիքը մահմեդական իշխանությունից ազատելու մղումով:

Երկրորդ ենթագլխում՝ «Խանական կառավարման վերացումը», հնագրական հանձնաժողովի վավերագրերի հիման վրա ցույց է տրվում, որ Գյուլիստանի 1813թ. հաշտության պայմանագրի կնքումից հետո խանական կառավարումն այլևս չէր կարող բավարարել ռուսական կառավարությանը, որն արդեն «հոգնել» էր խաների նկատմամբ մշտատև վերահսկողությունից: Ուստի ռուսական իշխանությունների մոտ աստիճանաբար հասունանում է Արցախում խանական կառավարման վերացման անհրաժեշտությունը. «Ղարաբաղի խանության բնակիչների դժգոհությունը, որոնց կառավարում էր Մեհտի Ղուլի խանը, - ասվում էր կայսր Ալեքսանդրին ուղղված Ա. Երմոլովի զեկուցագրում,- իր պարտականությունները կատարում էր չափազանց վատ, իրեն ներշնչել էր որպես մեծ իշխանության տեր, սակայն վախենալով կառավարության հանդեպ ունեցած իր պատասխանատվությունից, որոշեց փախուստի դիմել Պարսկաստան»[21]:

Ղարաբաղի խանի փախուստն այն վերջին կաթիլն էր, որին սպասում էր ռուսական կառավարությունը՝ խանական կառավարումը մարզում իսպառ

[19] Տե՛ս АКАК, т. II, դոկ. 1714. Предписание кн. Цицианова майору Лисаневичу, от 19-го июня 1805 года, N 424.

[20] Տե՛ս նույն տեղում, դոկ. 1731. Всеподданнейший рапорт кн. Цицианова, от 23-го июля 1805 года, N 27.

[21] Նույն տեղում, т. VI, ч. I, Тифлис, 1874, դոկ. 1301. Всеподданный рапорт ген. Ермолова, от 14-го марта 1822 года, с. 850.

վերացնելու համար: 1822 թ. նոյեմբերի վերջին հրապարակվում է գեներալ Ա. Երմոլովի ուղերձը Արցախի ժողովրդին, որում ազդարարվում էր. «...Ղարաբաղի խանությունն այս ժամանակից սկսած անցնում է ռուսական կառավարության անմիջական ենթակայության տակ: Խանական իշխանությունը հավերժ վերացվում է»[22]: Ի դեպ, ներկայիս ադրբեջանցի պատմաբանները Արցախում խանական կառավարման վերացման հարցում անհեթեթ հիմնավորում են բերում. «1816 թ. Կովկասում գլխավոր հրամանատար նշանակված գեներալ Ա. Երմոլովը կառավարման առաջին իսկ օրից չէր վստահում ադրբեջանական ժողովրդին, նրանում տեսնելով որպես պոտենցիալ թշնամի,- գրում է Ջ. Հասանլին: - Այդ պատճառով նա ուղիներ էր որոնում խանության ձևական վերացման համար, որոնք (ասել է թե՝ թաթարները – Է. Հ.) ամեն որպես կարող էին դառնալ անկախության համար պայքարի կազմակերպիչ: Հյուսիսային Ադրբեջանում Երմոլովի ներկայացուցիչ հայ գեներալ Վ. Մադաթովն այդ գործում ակտիվորեն աջակցում էր նրան և ...հետևողականորեն իրականացնում էին իրենց ծրագիրը»[23]:

Խանական կառավարման վերացումը դրականորեն է ընդունվում արցախահայության կողմից: Թեպետ ոչ վերջնականապես, ապա գոնե առժամանակ դադարում են պարսիկների անպատիժ ներխուժումները Արցախ, որի հետևանքով թալանվում էր տեղի հայությանը պատկանող գույքն ու անասունները: Նկատելիորեն աշխուժանում է Արցախի հայերի մասնակցությունը երկրամասի տնտեսական գործընթացներին:

Երրորդ ենթագլխում՝ «Արցախը 1826 – 1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին», լուսաբանվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում Արցախում տիրող ռազմա-քաղաքական իրավիճակը: Կովկասի հնագրական հանձնաժողովի մի ամբողջ հատոր արտացոլում է ռուս-պարսկական հակամարտության ընթացքը, այդ թվում և Արցախում ընթացող ռազմական գործողությունները:

1826 - 1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Արցախին վերաբերող Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում աչքի է զարնում ռուսական բանակներին տեղի հայության կողմից ցույց տված լայն աջակցության փաստագրումը: Ընդ որում, Արցախի հայությունը պատերազմական այդ գործողություններին մասնակցել է թե՛ որպես հետևակ և թե՛ որպես հեծելազոր: Քաջ տիրապետելով տեղանքին՝ Արցախի հայերը ոչ միայն ուղեկցորդներ էին ծառայում ռուսական բանակներում, այլև բազմիցս անգամ ռուսական զորքերին դուրս են բերել պարսկական շրջապատումից: Բացի դրանից, լայն կապեր ունենալով հարևան մահմեդական մարզերում, նրանք

[22] Նույն տեղում, դոկ. 1299. Прокламация ген. Ермолова жителям Карабагского ханства, от ноября 1822 года.

[23] Джамиль Гасанлы, Карабах: Поиск исторической правды..., с. 141. Էլեկտրոնային կայք՝ http://cyberleninka.ru/article/n/karabah-poisk-istoricheskoy-pravdy.

կարևոր տեղեկություններ էին հաղորդում պարսկական զորքերի թվաքանակի և տեղաշարժերի մասին[24]:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ կրում է **«Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը Արցախում ռուսական տիրապետության հաստատման մասին (1828 - 1864 թթ.)»** խորագիրը և բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Ռուսական կառավարության ձեռնարկումներն Արցախում», քննարկվում է ռուսական իշխանությունների կողմից Արցախում իրականացված սոցիալ-տնտեսական բնույթի բարեփոխումները, որոնք տեղ են գտել ԿՀՀ վավերագրերում:

Ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո Արևելյան Հայաստանը և նրա մաս կազմող Արցախը դարձան ռուսական կայսրության անբաժանելի մասեր: Պարսկական տիրապետությունը փոխարինվեց ռուսականով. պատմական իրադարձությունները հայկական մարզերում նոր ընթացք և բովանդակություն ստացան: Այդուհանդերձ, մահմեդական կառավարման հետևանքներն իրենց զգացնել էին տալիս Արցախի սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Անկասկած, այդ ժամանակաշրջանում Արցախում տիրող իրավիճակի մասին յուրաքանչյուր հաղորդում աղբյուրագիտական նշանակություն է ձեռք բերում, մանավանդ որ Ղարաբաղին վերաբերող վավերագրերը ներկայումս շարունակվում է շահարկման նյութ մնալ հարևան երկրի պատմաբանների համար:

ԿՀՀ վավերագրերը կարևոր մանրամասներ են հաղորդում Արցախի կառավարման համակարգի մասին: «Նոթեր բեկերի, աղալարների, գավառապետների և մահալների ավագների և մյուսների, կառավարիչների բնակիչների հանդեպ ունեցած ազդեցության և վերջիններիս պարտականությունների մասին» վավերագրում, օրինակ, ուշագրավ բացահայտումներ կան Արցախի կառավարչական համակարգի մասին[25]: Ուշագրավ են նաև Անդրկովկասի կառավարման համակարգի բարեփոխումների պատասխանատու Պ. Գանին ուղղված կառավարչապետ Ե. Գոլովինի 1838 թ. օգոստոսի 18-ի, նույն Գոլովինին հասցեագրված ռուս պաշտոնյա Կոցեբուի զեկուցագրերը, որտեղ իրավացիորեն նշված է, որ մահմեդական տիրակալների և տեղական բեկերի կատարած ապօրինությունների հետևանքով, Արցախի գյուղերի պատկանե-

[24] Տե՛ս АКАК, т. VI, ч. II, Тифлис, 1875, док. 633. Донесение кн. Меншикова ген-л. Вельяминову, от 2-го июля 1826 года, с. 349, док. 703. Всеподданный рапорт ген. Ермолова, от 12-го января 1827 года, с. 387 Всеподданный рапорт ген. Ермолова, от 20-го января 1827 года, с. 389 և այլն:

[25] Տե՛ս նույն տեղում, т. VIII, Тифлис, 1881, док. 354. Записка о правах беков, агаларов, наибов, старшин магальных и проч. и о влиянии владельцев на поселян и обязанностях сих последных к помещикам.

լիության հարցում կատարյալ խառնաշփոթ է տիրում[26]: Հնագրական հանձնաժողովի վավերագրերի հիման վրա ցույց է տրվում ռուսական կառավարության ձեռնարկումների նպատակն ու ուղղվածությունը:

Երկրորդ ենթագլուխը, որը կրում է **«Արցախի վարչակառավարման համակարգի և ժողովրդագրական տեղաշարժերի արտացոլումը ռուս պաշտոնյաների զեկուցագրերում»** վերնագիրը, նվիրված է Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում զետեղված ռուս բարձրաստիճան պաշտոնյաների զեկուցագիր-ուսումնասիրությունների (Զուբարև, Միկլաշևսկի և ուրիշ.) քննությանը: Հիմնվելով ռուս աստիճանավորների զեկուցագրերում տեղ գտած բացահայտումների վրա, ենթագլխում մանրամասը ներկայացվում և մատնանշվում է Արցախում մահմեդական կառավարման ծանր հետևանքները, տեղի խաների ու բեկերի կողմից հայերի սեփականությունը կազմող հողերի և գույքի անպատիժ բռնազավթումները և այդ ամենի արդյունքում՝ հայկական բնակչության թվաքանակի նվազման իրական պատճառները[27]: Այդ տեսակետից ուշագրավ է պետական խորհրդական Դ. Զուբարևի «Նոթեր Ղարաբաղի մարզի մասին» վերնագիրը կրող զեկուցագիրը, որում ճշմարտացի կերպով արտացոլված են XIX դարի առաջին կեսին Արցախում խմորված իրադարձությունները[28]:

Ենթագլխի երկրորդ հատվածում քննության են առնված ժողովրդագրական տեղաշարժերը Արցախում: Հիմք ընդունելով ԿՀՀՎ-ում զետեղված փաստաթղթերը, հիմնավորվում է, որ Արցախի մահմեդական բեկերը գիտակցաբար խոչընդոտներ են հարուցել՝ 1828-1829 թթ. Ղարաբաղում պարսկահայերի վերաբնակեցումը կանխելու համար, որի հետևանքով մեծ մասը սովի մատնվել ու մահացել են: Միայն Մարաղայում մահացածների թիվը կազմել է 1012 հոգի, իսկ 300 ընտանիք՝ խոստացված պայմանները չապահովելու պատճառով հեռացել է Արցախից: Ուստի ակներև է, որ հայերի վերաբնակեցումը Արցախում ժողովրդագրական տեսանկյունից, որևէ էական փոփոխության չի հանգեցրել: Ընդհակառակը, հավաքածուում զետեղված վավերագրերը հաստատում են, որ Ղարաբաղի խաներն իրենք են խրախուսել և հովանավորել հարևան մարզերից մահմեդականների բնակությունն Արցախում: Միայն Ելիզավետպոլի նահանգից մահմեդական 350 ընտանիքների տեղավորման փաստը ասվածի աներկբա հաստատումն է[29]: Ուստի միանգամայն անհիմն ու մտացածին են պարսկահայերի հաշվին Ղարաբաղի «հայանալու» մասին ադրբեջանցի պատմաբանների պնդումները:

[26] Տե՛ս նույն տեղում, տ. IX, Тифлис, 1884, док. 214. Отношение ген Головина к барону Гану, от 16-го августа 1838 года, N 8197, док. 215. Рапорт н.с. Коцебу ген. Головину, от 7-го ноября 1838 года, N 67.

[27] Տե՛ս նույն տեղում, տ. VII, Тифлис, 1878, док. 411. Записка к.а.. Зубарева о Карабагской провинции. Представлена гр. Паскевичу при рапорт, от 20-го апреля 1830 года, док. 412. Рапорт полк. Миклашевского гр. Паскевичу, от 22-го апреля 1830 года, N 718.

[28] Տե՛ս նույն տեղում, док. 411. Записка к.а.. Зубарева о Карабагской провинции. - Представлена гр. Паскевичу при рапорт, от 20-го апреля 1830 года, с. 460.

[29] Տե՛ս նույն տեղում, էջ 462:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը ուշագրավ տեղեկություններ են հաղորդում Արցախում բնակություն հաստատած ռուս վերաբնակների մասին: Պարզվում է, որ ռուս վերաբնակները բավականին հաճույքով են համաձայնվել բնակություն հաստատել Արցախում, նշել են հայերի հետ շփվելու դրական ազդեցության մասին[30]: Ռուս աղանդավորներից բացի, Արցախում բնակվելու և իրենց գործունեությունը ծավալելու ցանկություն են հայտնել նաև շվեյցարացի միսիոներները, որոնք զանազան բարեգործական և կրթական հաստատություններ են հիմնել Արցախում՝ թերևս նկատի ունենալով տեղի հայության կրթական ավանդույթները[31]:

Երրորդ ենթագլխում՝ «Արցախի սոցիալ - տնտեսական և քաղաքական իրավիճակի լուսաբանումը» քննության է առնվել ԿՀՀ վավերագրերի աղբյուրագիտական կարևորությունը՝ Արցախի 1830 - 1850-ական թթ. պատմության լուսաբանության և այդ պատմության ներկայիս խեղաթյուրումներին հակադարձելու խնդրում:

Այդ տեսակետից հատկապես ուշագրավ է ռուսական գլխավոր շտաբի սպա Պրուժանովսկու 1845 թ. մարտի 4-ի զեկուցագիրը, որում, հերթական անգամ հաստատվում է, որ՝ «Ղարաբաղի խաները բազում հողերի անօրինական սեփականատեր են և կամայականորեն են տիրացել դրանց... այդ ամենի գլխին՝ ժամանակին կանգնած էր Մեհտի Ղուլի խանը... ինչպես նաև նրա կողմից հովանավորվող ազգականներն ու մերձավորները»[32]: Ակնհայտ է, որ ռուս բարձրաստիճան սպան հաստատում է Արցախի հայությանը պատկանող հողերի բռնագրավման փաստը:

Ենթագլխի երկրորդ հատվածում ներկայացված են Արցախի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած բարեփոխումները, առանձնակի ընդգծվում է Արցախի հայության ակտիվ դերակատարությունը երկրամասի սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքում: Մասնավորապես նշվում է, որ ռուսական իշխանությունների կողմից լուրջ ուշադրության են արժանանում Շուշիի բերդի և Խուդավերինի կամուրջի վերակառուցումն ու բարեկարգումը[33]: ԿՀՀ վավերագրերում տեղ գտած մեկ այլ փաս-

[30] Տե՛ս նույն տեղում, տ. X, Тифлис, 1885, док. 293. Записка о Русских переселенцах-раскольниках в Каспийской области, с. 285.

[31] Տե՛ս նույն տեղում, տ. VIII, док. 234. Отчет Базельских миссионеров борону Розену от 5-го октября 1835 года, с. 325.

[32] Նույն տեղում, տ. X, док. 295. Доклад Генерального штаба кап. Пружановского по даносу ген-м Мехти Кули хана, что многие лица в Карабаге незаконно владеют землями. от 4-го марта 1845 года, N 17, с. 289.

[33] Տե՛ս նույն տեղում, տ. VIII, док. 272. О фортификационной обороне Закавказского края устройством дорог и вообщв о предприятиях по строительной части, с. 374.

տաթղթի հավաստմամբ, Արցախն իր բնական հարստություններով հայտնվել էր ռուս հանքախույզների ուշադրության կենտրոնում[34]:

Հնագրական հանձնաժողովի վերջին հատորներից մեկում էլ ներկայացված է Կովկասի ուսումնական օկրուգի 1855 թ. հաշվետվությունը, որից պարզ է դառնում, որ Շուշիում գործել են մասնավոր չորս դպրոցներ՝ Տեր-Ավակովի, Տեր-Մովսեսի, Սիմոնովի և Յուսուպբեկ Ներսեսովի դպրոցները. այսինքն՝ գործող չորս դպրոցներից երեքը բացահայտ հայկական էին[35]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ բաժնում ի մի են բերված ատենախոսության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները:

1. Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում աներկբա փաստվում է Արցախը հնագույն ժամանակներից հայկական տարածք հանդիսանալու իրողությունը, որը բնակեցված է եղել բնիկ հայերով և միջնադարից սկսած՝ կառավարվել է հայ մելիքների կողմից: Ուստի Արցախի XVIII - XIX դարերի պատմությունը ադրբեջանցի պատմաբանների կողմից «սեփականացնելու» ջանքերն ու փորձերը հակագիտական են:
2. ԿՀՀ վավերագրերում բացահայտվում են XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի Արցախի պատմությանը վերաբերող առանցքային շատ հարցեր: Ամբողջական ձևով ներկայացված է ռուսական արքունիքի հետ Արցախի հայ մելիքների հետ ունեցած առնչությունները, որոնք լիարժեք պատասխան են տալիս այն հարցին, թե ինչու և ինչ պատճառներով Արցախի հայ մելիքները թողեցին իրենց հայրենիքը և հայտնվեցին հարևան Վրաստանում:
3. ԿՀՀ վավերագրերը հաստատում են պատմական այն իրողությունը, որ Արցախի մելիքները և նրանց հետ Վրաստան հեռացած հայ բնակչությունը հայրենի եզերքը լքել են մահմեդական տիրակալների վարած հայահալած ու բիրտ քաղաքականության պատճառով: Այդուհանդերձ, հաստատվելով հարևան Վրաստանում՝ Արցախի մելիքները ու հայ բնակչությունը ոչ միայն տնտեսական վերելք ապահովեցին իրենց հատկացված տարածքներում, այլև նշանակալի ծառայություններ մատուցեցին ռուսական կառավարությանը՝ Անդրկովկասում ռուսական ներկայությունը և հետագա առաջխաղացումն ամրապնդելու խնդրում:
4. Հավաքածուի վավերագրերն անառարկելիորեն ապացուցում են, որ Արցախի հայ բնակչության գույքի բռնագրավումները կատարվել են խանական կառավարման օրոք և վեջիններիս թողտվությամբ: Ավելին՝ մահմեդական իշխանությունների կողմից հետևողականորեն իրականացված ձեռնարկումների հետևանքով հայկական տարրը գնալով նվազել է Ղարաբաղ-Արցախում և դա պատմագիտական բացահայտ ճշմարտություն է: Հետևաբար՝ Արցախի հայ բնակչության նկատմամբ մահմեդական կառավարիչների որդեգրած բիրտ քաղաքականությունը և նրանց կողմից մահմեդական բնակչության տեղաշարժի խրախուսումը իրենց բացասական հետքն են թողել Արցախի ժողովրդագրական պատկերի վրա:
5. Վավերագրերում հստակ փաստագրված է 1804-1813 և 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներում ռուսական բանակներին Արցախի հայության ցույց տված լայն աջակցությունը: Քաջ տիրապետելով տեղանքին, նրանք ոչ միայն ուղեկցորդներ են ծառայել ռուսական բանակներում, այլև բազմիցս անգամ ռուսական զորքերին դուրս են բերել պարսկական շրջապատումից: Բացի դրանից, լայն կապեր ունենալով հարևան մահմեդական մարզերում, նրանք կարևոր տեղեկություններ են հաղորդել պարսկական զորքերի թվաքանակի և տեղաշարժերի մասին: Այդուհանդերձ, հակված ենք կարծելու, որ Արցախի հայության ռուսական բանակներին ցույց տված ծանրակշիռ օգնությունն առաջին հերթին պայմանավորված էր սեփական հայրենիքը մահմեդական իշխանությունից ազատելու մղումով:
6. ԿՀՀ-ի վավերագրերում հստակ ընդգծվում է, որ խանական անարդարացի համակարգի դեմ բացառապես ընդվզել է Արցախի հայությունը և հնարավոր առիթի դեպքում արտահայտել է իր վերաբերմունքն այդ համակարգի հանդեպ: Դրան հակառակ՝ հարևան մահմեդական մարզերը լիովին համակերպվել են այդ համակարգի հետ: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է, որ Արցախը և հարևան մահմեդական մարզերը երբեք չի կարելի նույնականացնել, ինչը «մատի փաթաթան են դարձրել» հարևան երկրի պատմաբանները, թե իբր՝ Արցախը ոչնչով չի տարբերվել հարևան «ադրբեջանական - պարսկական» խանություններից:
7. Արցախում խանական կառավարման վերացումը դրական հետևանքներ ունեցավ տեղի հայության համար. թեպետ ոչ վերջնականապես, ապա գոնե որոշ ժանամակով դադարեցին պարսիկների անպատիժ ներխուժումները, որի արդյունքում թալանվում էր հայությանը պատկանող գույքն ու անասունները: Ռուսական տիրապետության վերջնական հաստատումից հետո Արցախում կատարվեցին սոցիալ-տնտեսական բնույթի բարեփոխումներ, որոնց նպատակը մի կողմից՝ խանական կառավարման հետևանքների վերացումն էր, մյուս կողմից՝ երկրամասի բնակչության համար տնտեսական զարգացման բարենպաստ պայմանների ստեղծումը:
8. Ընդունելով հանդերձ տարածաշրջանում Ռուսաստանի հետապնդած քաղաքականության իմաստն ու նպատակները, որոնք առանձին դեպքերում ակնհայտ գաղութային բնույթ էին կրում, այդուհանդերձ, ներկա ուսումնասիրության պարագայում՝ Արցախի հայ բնակչության գոյատևման տեսակետից, ռուսական տիրապետության տարիներն անհամեմատ դրական նշանակություն են ունեցել:

---

[34] Տե՛ս նույն տեղում, т. X, док.. Отчет князя М.С. Воронцова за 1846-1848 годы. Отчет по управлению Кавказским краем, XII - Горное производство, с. 868.

[35] Տե՛ս նույն տեղում, т. XI, Тифлис, 1888, док. 779. Отчет по Кавказскому учебному округу за 1855 академический год, с. 739.

9. ԿՀՀ-ի վավերագրերն անհերքելիորեն հաստատում են, որ մահմեդական բեկերը գիտակցաբար խոչընդոտներ են հարուցել՝ 1828-1829 թթ. Արցախում պարսկահայերի վերաբնակեցումը կանխելու համար, որի հետևանքով մեծ մասը սովի են մատնվել ու մահացել են: Միայն Մարաղայում մահացածների թիվը կազմել է 1012 հոգի, իսկ 300 ընտանիք՝ խոստացված պայմանները չապահովելու պատճառով, հեռացել է Արցախից: Ուստի ակներև է, որ հայերի վերաբնակեցումը Արցախում ժողովրդագրական տեսանկյունից, որևէ էական փոփոխության չի հանգեցրել: Ընդհակառակը, ԿՀՀ վավերագրերը հաստատում են, որ Ղարաբաղի կառավարիչները բազմիցս խրախուսել և հովանավորել են հարևան մարզերից մահմեդականների բնակությունն Արցախում: Միայն Ելիզավետպոլի նահանգից մահմեդական 350 ընտանիքների տեղավորման փաստը ասվածի աներկբա հաստատումն է: Ուստի միանգամայն անհիմն ու մտացածին են պարսկահայերի հաշվին Ղարաբաղի «հայանալու» մասին ադրբեջանցի պատմաբանների պնդումները:

10. Արցախի XIX դ. երկրորդ քառորդի պատմությանը վերաբերող ԿՀՀ վավերագրերն ունեն ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ռազմաքաղաքական բովանդակություն: Դրանք կարևոր մանրամասներ են հաղորդում Արցախի կառավարման համակարգի մասին: Հատկապես ուշագրավ են հավաքածուում զետեղված ռուս բարձրաստիճան պաշտոնյաների զեկուցագիր-ուսումնասիրությունները, որոնցում ներկայացվում և մատնանշվում են Ղարաբաղ - Արցախում մահմեդական խաների կառավարման ծանր հետևանքները, հայկական բնակչության թվաքանակի նվազման իրական պատճառները:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հոդվածներում

1. Ղարաբաղի հայկական մելիքները Վրաստանում՝ ըստ Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի վավերագրերի, «Էջմիածին» հանդես, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 2017, N Թ, սեպտեմբեր, էջ 94-102:
2. Ղարաբաղի (Արցախի) հայկական մելիքությունները «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում», «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2017, էջ 159-165:
3. Ղարաբաղի հայությունը 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմում ըստ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի, «Տարեգիրք աստվածաբանության», Գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ., հատոր ԺԲ, 2017, էջ 393-403:
4. Խանական կառավարման վերացումը Ղարաբաղում՝ ըստ Կովկասի հնագրական հանձնաժողովի նյութերի, «Պատմա-բանասիրական հանդես», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, թիվ 2 (2018), էջ 191-203:
5. Աղբյուրագիտական երկու հետազոտություն Ղարաբաղի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, թիվ 1 (2018), էջ 62-72:
6. Ուշագրավ վավերագիր Ղարաբաղի մասին, «Բանբեր Մատենադարանի», թիվ 25, 2018, էջ 310-320:
7. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը Ղարաբաղում (ըստ «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի»), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2018, էջ 203-209:
8. Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին՝ ըստ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի, «Բանբեր Մատենադարանի», թիվ 26, 2018, էջ 91-99:

HOVHANNISYAN EDUARD H.
«THE ACTS OF THE CAUCASIAN ARCHAEOGRAPHIC COMMISSION» AS THE SOURCE OF THE STUDYING THE HISTORY OF ARTSAKH (KARABAKH)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "Historiography, source study" 07.00.05.

The defense of the dissertation will be held on May 7, 2019, at 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, RA, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24 /4).

SUMMARY

The PhD thesis is devoted to the Russian prominent study of source collection "**The Acts of the Caucasian Archeographic Commission**" (ACAC)". The archive documents included in this collection reveal many pivotal questions concerning the history of of Artsakh (Karabakh) in the late XVIII – first half of the XIX century.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, a list of sources and literature used.

The introduction substantiates the importance and relevance of the topic, presents the degree of research of the issue and the scientific novelty, the source study basis, goals and objectives, chronological frameworks and its applied significance.

The first chapter - "The Acts of the Caucasian Archeographic Commission on the political situation of late XVIII and early XIX century Artsakh (Karabakh) and the province's annexation into Russia" is dedicated to the study of archival documents presented in ACAC, which relates to the history of the late XIII and early XIX centuries in Artsakh and consists of two subchapters.

The first subchapter confirmed the undeniable historical truth: since ancient times Karabakh was an Armenian territory, inhabited by indigenous Armenians and ruled by Armenian meliks. An important point in the chapter is the study of the fact that the Armenian meliks were in neighboring Georgia. In this sense, it is proved that the Armenian meliks of Artsakh and the Armenian population was subjected to persecution, violence and threats by local rulers–in other words, displacement.

The second subchapter is devoted to the study of the military-political situation of Artsakh during the first Russian-Persian war of 1804-1813, highlighted the process of the annection of Karabakh into Russia, presented numerous archival documents, which reveal the reasons and motives of accepting Russian submissiveness by the Karabakh khane in May of 1805.

The second chapter is entitled "Revealing the history of Artsakh of the first quarter of the XIX century in the Acts of the Caucasian Archeographic Commission" and consists of three subchapters.

The first subchapter is devoted to the investigation of the events in Karabakh after Ibrahim Khan's adoption of the Russian submissiveness, although as ACAC's materials indicate, Ibrahim Khan and his inheritor Mehti Ghuli Khan continued to pursue a dual policy towards Russia, which made the Russian government think seriously about changing the status of Karabakh. The subchapter contains a large number of archival documents that point out the all-around assistance of the Artsakh Armenians to the Russian troops in the Russian-Persian War of 1804-1813.

The second subchapter - "The abolishment of the Khan's rule in Artsakh", is shown that after the end of the War of 1804-1813, the Russian government initiated the change of Karabakh's status. To do this, the Russian government had all the necessary bases. By a special order of the Governor of the Caucasus, General A. Ermolov, in November 1822 the Khan's rule in Karabakh was abolished. From this view, the materials contained in the "Acts" have an important source-study significance.

The third subchapter presents the military operations, which were carried out during the second Russian-Persian war of 1826-1828 in Artsakh. From the first days of the war, Armenians of Karabakh actively participated in main battles. The documents contained in the "The Acts of the Caucasian Archeographic Commission" not only provide essential information but also emphasize the great contribution of the Armenians of Artsakh to the victory of the Russian armies and the aspiration of the Armenian people for the liberation of their homeland.

The third chapter is entitled "The Acts of the Caucasian Archeographic Commission about establishment of the Russian domination in Artsakh" and consists of three subchapters.

The first subchapter examines the socio-economic and political reforms implemented by the Russian government in Artsakh.

The second subchapter comprises the study of reports of Russian high-ranking officials in Karabakh. The facts presented in these reports reveal the illegal actions committed by the local rulers who inflicted negative consequences, which, in turn, were reflected in almost all economic fields of Artsakh. The chapter also outlines the issue of demographic movements in Artsakh. It is underlined that Tatar beks have prevented the resettlement of Persian Armenians in Artsakh. The subchapter also provides information on Russian and Swiss resettlment in Karabakh.

The third subchapter unveils a set of facts, which prove the active participation of Artsakh Armenians in the development of socio-economic and educational and cultural life of the province.

The conclusion sums up the main outcomes and results of the PhD thesis.

ОГАНЕСЯН ЭДУАРД АЙКАЗОВИЧ
«АКТЫ КАВКАЗСКОЙ АРХЕОГРАФИЧЕСКОЙ КОМИССИИ» КАК ИСТОЧНИК ИССЛЕДОВАНИЯ ИСТОРИИ АРЦАХА (КАРАБАХА)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 " Историография, источниковедение ".

Защита состоится 7- го мая 2019 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24 /4).

РЕЗЮМЕ

Исследование посвящено изучению знаменитого русского источниковедческого собрания «Акты Кавказской археографической комиссии» (АКАК). Представленные в АКАК архивные документы раскрывают ряд ключевых вопросов истории Арцаха (Карабаха) конца XVIII – первой половины XIX века.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении обоснованы важность и актуальность темы, указаны степень изученности проблемы и научная новизна, источниковедческая основа, а также цели и задачи, хронологические рамки и прикладное значение исследования.

Первая глава - «Акты археографической комиссии Кавказа о политической ситуации Арцаха (Карабаха) в конце XVIII – начале XIX века и присоединение области к России», посвящена исследованию представленных в «Актах» архивных документов, касающихся истории Арцаха конца XVIII – начала XIX в., и состоит из двух разделов.

В первом разделе на основе документов археографической комиссии подтверждается неоспоримый исторический факт, что Карабах с древних времен был армянской территорией, населенной коренным армянским этносом и управлялся армянскими меликами. Важное место в разделе занимает исследование вопроса перехода армянских меликов в соседнюю Грузию. В этой связи доказывается, что армянские мелики и подвластное им армянское население Арцаха постоянно подвергались запугиваниям, насилиям и угрозам со стороны местных правителей, более того - это была депортация в истинном смысле этого слова.

Второй раздел главы посвящен изучению военно-политической обстановки Арцаха во время первой русско-персидской войны 1804-1813 гг., освещен процесс присоединения Карабаха к России, приведено также множество архивных документов из собрания Актов, выявляющих мотивы и причины принятия карабахским ханом русского подданства в мае 1805 г.

Вторая глава - «Освещение истории Арцаха первой четверти XIX века в Актах кавказской археографической комиссии», состоит из трех разделов.

Первая часть главы посвящена исследованию исторических событий, произошедших в Карабахе после принятия Ибрагим ханом русского подданства, хотя, как утверждают документы археографической комиссии, Ибрагим и его приеемник Мехти-Кули хан проводили двойственную политику в отношении России, что и побудило русское правительство серьезно подумать об изменении статуса Карабаха. В разделе особое место занимает исследование вопроса многогранной помощи армянского населения Карабаха русским войскам в годы первой русско - персидской войны 1804-1813 годов.

Во втором разделе главы – «Упразднение ханского правления в Арцахе», показано, что уже после окончания войны 1804-1813 гг. российское правительство приступило к изменению статуса Карабаха. Для этого у него были достаточные основания. По особому распоряжению правителя Кавказа генерала А. Ермолова в ноябре 1822 г. ханское правление в Карабахе было упразднено. В этом отношении материалы, содержащиеся в «Актах археографической комиссии Кавказа», имеют важную источниковедческую значимость.

В третьем разделе главы - «Арцах в годы русско-персидской войны 1826-1828 гг.», освещаются военные действия, происходившие в Карабахе во время второй русско-персидской войны. С первых дней войны карабахские армяне принимали деятельное участие в военных действиях. Архивные документы не только сообщают важные подробности этого участия, но и подчеркивают большой вклад арцахских армян в победы русских войск, стремление армянского народа к освобождению своей родины.

Третья глава - «Акты археографической комиссии Кавказа об утверждении российского господства в Арцахе», также состоит из трех разделов.

В первом разделе изучены проводимые в Арцахе российским правительством социально-экономические и политические реформы.

Во второй части главы особое внимание уделено изучению исследований русских высокопоставленных чиновников. Содержащиеся в этих исследованиях материалы раскрывают целый ряд злодеяний, совершенных местными правителями, отрицательные последствия которых отражались во всех областях экономической жизни Арцаха. Затрагиваются также вопросы демографических процессов, происходящих в Арцахе: почеркивается, что татарские бекы всячески препятствовали переселению персидских армян в Карабах. В разделе приводятся также сведения, сообщаемые археографической комиссией, касающиеся русских и швейцарских переселенцев Карабаха.

В третьем разделе главы приведено множество фактов из собрания «Актов» археографической комиссии, доказывающих активное участие армянского населения Арцаха в развитии социально-экономической и культурной жизни области.

В заключении изложены основные выводы исследования.